№ 166 ՍԵՊՏԵՄԲԵՐԻ 29 (ՀՈԿՏԵՄԲԵՐԻ 11) 1878 ՍԵՊՏԵՄԲԵՐԻ 29 (ՀՈԿՏԵՄԲԵՐԻ 11) № 166

ԵՕԹԵՐՈՐԴ ՏԱՐԻ

ՄՇԱԿ

Տարեկան գինը 10 ռուբլ, կէս տարվանը 6 ռուբլ։

Թիֆլիսում գրվում են միմիայն խմբագրատան մէջ։

Օտարաքաղաքացիք դիմում են ուղղակի Тифлисъ. Редакція „Мшакъ“

Խմբագրատունը բաց է առաւօտեան 10—2 ժամ (Բացի կիրակի և տօն օրերից)։

Յայտարարութիւնները ընդունվում են ամեն լեզուով

Յայտարարութիւնների համար վճարում են իւրաքանչիւր բառին 2 կոպէկ։

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ

Մի պրօէկտ ձիաքարշ երկաթուղու։—Ներքին տեսութիւն։ Նամակ Իգդիրից։ Նամակ Վերին-Ագուլիսից։ Ներքին լուրեր։— Արտաքին տեսութիւն։ Անգլիական դեսպանութեան անաջողութիւնը։ Նամակ Թիւրքիայից։ Նամակ Ֆրանսիայից։ Արտաքին լուրեր։—«Մշակի» հեռագիրներ։ — Յայտարարութիւններ։ — Տեղեկացոյց։—Բանասիրական։ Մի ճանապարհորդութիւն։

ՄԻ ՊՐՕԷԿՏ ՁԻԱՔԱՇ ԵՐԿԱԹՈՒՂՈՒ

Այս օրերս մեզ աջողվեցաւ ձեռք գցել մի պրօէկտ Թիֆլիսի ձիաքաշ երկաթուղու։ Այդ երկաթուղին պէտք է կապի մեր քաղաքի ամենահեռաւոր կէտերը միմեանց հետ։ Գիծը կը սկսվի մաքսատանից և Փօթի-Թիֆլիսեան երկաթուղու կայարանից, կը շարունակվի ամբողջ Կոլքնիայով, կանցնի Միքայէլեան կամուրջը և յետոյ բարձրանալով Աղէքսանդրեան այգու մօտ Սոլդատսկի բազար անուանված փողոցը կը հասնի մինչև Երևանեան հրապարակը։ Այդտեղից գիծը կը շարունակվի Դվորցովի փողոցով և Գոլովինսկի պրոսպեկտի երկայնութեամբ մինչև Վերայի գերեզմանատունը։

Այդ ձիաքաշ երկաթուղին բացի ճանապարհորդներին ծառայելուց, կը տեղափոխի նոյնպէս բեռներ և ապրանքներ։ Ուրիշ քաղաքներում, որքան մեզ յայտնի է, ապրանքներ տեղափոխող ձիաքաշ երկաթուղիներ չը կան, բայց մեր կարծիքով Թիֆլիսի համար այդ տեսակ նորաձևութիւն անհրաժեշտ է, որովհետև Թիֆլիսի փողոցները նեղ են առհասարակ և մեր փողոցների վրա յարակցութիւնը և կանոնաւոր երթևեկութիւնը միշտ արգելված է լինում ահագին արաբաներով և փուրգոններով։ Ձիաքաշ երկաթուղին, ուրեմն, պէտք է յանձն առնի Թիֆլիսի գլխաւոր փողոցներում այդ զանազան սայլերի, փուրգոնների և արաբաների աշխատանքը։

Մեր պարտաւորութիւնն էր ծանօթացնել ընթերցողին Թիֆլիսի ձիաքաշ երկաթուղու այդ պրօէկտի հետ, բայց եթէ մեզ հարցնեն՝ մենք ինքներս հաւատո՞ւմ ենք արդեօք որ այդ օգտաւէտ ձեռնարկութիւնը շուտով կիրագործվի,—մենք կը պատասխանենք՝ ոչ, չենք հաւատում։ Պրօէկտներ գրել Թիֆլիսում սովորական բան է, բայց իրագործել այդ պրօէկտները մենք ընդունակ չենք։ Մինչև այժմ մենք չը կարողացանք ոչ ջրանցքը, ոչ էլ գազի լուսաւորութիւնը իրագործել։ Ձիաքաշ երկաթուղու պրօէկտն էլ, երևի նոյն վիճակին կենթարկվի։ Դա շատ ցաւալի երևոյթ է։

Գ. Ա.

ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ՆԱՄԱԿ ԻԳԴԻՐԻՑ

22 սեպտեմբերի

«Մշակի» միջոցով հայ հասարակութիւնը արդէն ծանօթ է Բայազէթ շրջանի ազգաբնակութեան և նրան թվի հետ։ Թէև ես մեծ ցանկութիւն ունէի մի և նոյն տեղեկութիւնները հաղորդել և Ալաշկերտի մասին, սակայն, անկարող լինելով ձեռք բերել հարկաւոր տեղեկութիւնները, այդ իմ ցանկութեան իրագործելը առ ժամանակ յետաձգեցի և ահա, օգուտ քաղելով Ալաշկերտի կառավարութեան ժամանակաւորապէս իգդիր տեղափոխվելուց և ձեռք բերելով պաշտօնական կերպով հաւաքած տեղեկութիւնները այդ մասին, չատապում են հրատարակել։ *)

Ալաշկերտի շրջանը, որ պատկանում է տաճկաց Բայազէթի մութասարիֆութեանը, բաղկանում է երեք կազայից՝ Կազա-Ալաշկերտ, Կազա-Ղարաքիլիսա և Կազա-Խամուր։ Այդ շրջանում կան 195 գիւղեր, ընդամենը 17,305 բնակիչներով երկու սեռի ևս։ Այս թվից 30 գիւղեր բնակեցրած են հայերով, ընդամենը 989 ընտանիքներով, կամ 7935 բնակիչներով, որոնց թվում 4 հայ-կաթոլիկների գիւղեր 157 ընտանիքներով։ Մնացեալ 155 գիւղերի բնակիչներն են քիւրդ-մուսուլմաններ, 1755 ընտանիք, քիւրդ-եզիդի 94 և պարսիկներ 13 ընտանիք, ընդամենը 1862 ընտանիք, կամ 9770 բնակիչներ երկսեռի։ Այս ազգաբնակութեանց պարապմունքն մի և նոյն է, ինչ որ Բայազէթ շրջանի, այն է հայերը և պարսիկները պարապում են գլխաւորապէս հողագործութեամբ, անասնապահութեամբ և մասնաւորապէս վաճառականութեամբ, իսկ քիւրդերը գլխաւորապէս խաշնարածութեամբ և մասնաւորապէս հողագործութեամբ։ Երկիրը շատ բերրի է և արտադրում է հարկաւոր ամեն ինչ։ Ամենուրեք ոռոգելի հողեր կան։ Ամենուրեք հանդերձ կան։ Ամենուրեք անտառներ կան։ Ամենուրեք հանքեր կան։ Ամենուրեք ... կան։ Ամենուրեք ... կան։ Ամենուրեք ...

բերում է մեծ առատութեամբ ցորեն, գարի, վուշ և հաճար։ 1877 թուականի անցքը, ինչպէս յայտնի է, յափշտակութեան մատնեց Ալաշկերտի հայ բնակչաց ընչից մեծ մասը և ալաշկերտցիք ստիպված էին քիւրդերի կատաղի յարձակումների պատճառով ռուսաց Երևանի զօրաբանակի պաշտպանութեան ներքոյ գաղթել Երևանի նահանգը։ Սակայն երբ ռուսաց զօրքը, կրկին յարձակողական դիրք ընդունելով, յետ մղեց թշնամու բանակը, ալաշկերտցիք դաղթականութեան դառն հետևանքի բաժակը քամելուց յետոյ, վերադարձան իրանց հայրենիքը և մասամբ յետ ստանալով քիւրդերից յափշտակած կայքը և անասունները և քաշալերված Սան-Ստէֆանոյի դաշնագրութեան հիման վրա այդ երկիրը Ռուսաստանին միացնելու իրողութեամբ, ձեռք տուին հերկել իրանց արդաւանդ հողերը և պարապել զանազան մանրավաճառութեամբ։ Բայց բաղդը կարծես հալածում էր ալաշկերտցուն։ Եւրոպան ոչինչ համարելով հայի կրած տառապանքը, ուշք չը դարձրեց հայի պահանջին, այդ բաւական չէր. նա վճռեց Ալաշկերտը վերադարձնել Ցաճկաստանի անիշխանութեանը, և հայը, չը կարողանալով այլ ևս տանել քիւրդերի հարստահարութիւնը, վճռեց դաղթել իր բնիկ երկրից, թողնելով Աստուծու տուրք տաճարները մոլեռանդ և բարբարոս քիւրդերի ձեռքը յաժոթ և ի նախատինս քրիստոնեայ և լուսաւորված Եւրոպայի, կարծես դրանով ցանկալով հաստատել այդ Եւրոպային, որ հայը այլ ևս չէ հաւատում նրա վճիռների իրագործելուն, որ հայը հասկացել է Եւրոպայի մարդասիրութեան և քրիստոնէութեան պատրուակով իր չահերի պաշտպանութիւնը միայն։ Այո, հայը այլ ևս չը հաւատալով, որ նրան երբ և իցէ կը վիճակվի վայելել Ցաճկաստանի կառավարութեան ներքոյ մարդկութեան իրաւունքները, բարւոք համարեց փախչել իր հայրենի օջախից և գտնվեցին մարդիկ, որոնք խրախուսեցին հայերի այդ վարմունքը, համոզելով, որ ոչ մի ապահովութիւն չէ սպասում նրանց ապագայում, որ ոչինչ բեֆորմաներ և բարեկարգութիւններ տեղի ունենալու չեն Հայաստանում, որ ոչ մի պետութիւն իր վրա չէ ընդունել ապահովել հայի վիճակը, և գիտէք ովքեր են այդ մարդիկ՝ հայ քահանայք, մասամբ հայ ծառայողք և Սմբատ, Միխակ և ուրիշ միկիտանչի աղաներ։ Այո, այդ պարոնները յանդգնում են արհամարհել հայրենի օջախը. դրանք որոնում են հարստութիւն, փառք և պատիւ, դրանք արհամարհում են ազգութիւն և հայրենիք, դրանք չեն ընդունում ապագայ։

Մ. Տէր-Պետրոսեանց

ՆԱՄԱԿ ՎԵՐԻՆ-ԱԳՈՒԼԻՍԻՑ

17 սեպտեմբերի

Տաք, չորային և թոզոտ ամառը անցաւ, սեպտեմբերն էլ եկաւ բերելով իր հետ աշնան հով, գեղեցիկ և անձրևային օրերը, բայց մենք դարձեալ չազատվեցանք հեղեղից։ Թէև այս ամառ Ագուլիսը մի քանի անգամ ենթարկվեցաւ այդ սարսափելի հեղեղներին, բայց այս վերջինի նման, որ պատահեց 7-ից դէպի 8-ի գիշերը, չէ տեսել Ագուլիսը և չը կարծեմ որ տեսնէ էլ այսուհետև։ Եթէ մէկը օտար մարդկերանցից մտնէ մեր գիւղը, անշուշտ կը կարծէ թէ կուր գետը մի գիշերվայ մէջ ընթացքը փոխել, թափվել է այստեղ և դարձեալ աներևոյթացել է։ Հեղեղի բերած ահագին 1000-աւոր պուղանոց քարերը նայողին սարսափ են բերում։ Ճանապարհները բոլորովին քարուքանդ են եղել և ծածկվել ահագին քարերով, բայց ագուլեցին դեռ ևս հոգ չէ տանում այդ մասին և մաքրել չէ տալիս նրանց։

Մեր նոր ուսուցիչները այն է՝ պ. պ. Զիպիանեանց, Հէջուբեանց և Տէր-Խաչատրեանց հասան այստեղ Ամսի 11-ից սկսվեց ուսումը։ Տըղայոց 3-դ դասատունը, որ մի քանի տարի չարունակ փակված էր, վերջապէս այս տարի բացվեցաւ, որի մէջ, ինչպէս ասում են, կան միայն 8—9 աշակերտներ. Հասարակաց ընթերցարանում, որը գտնվում է բազարում և ուր հոգաբարձութիւնը ստանում է աշակերտաց ծնողներից թոշակը և տալիս է նրանց տոմսակներ, պատահում են ծիծաղաշարժ տեսարաններ։—Մէկը գանգատվում է, որ իր որդու համար շատ են առնում, ասելով թէ փոքր երեխայ է, ինքն երեխան չարժէ այդքան փող, առանց մտածելու թէ փոքրերի հետ աւելի դժուար է պարապելը քան թէ մեծերի հետ, միւսը թէ անցեալ տարի ինչքան վճարել է (թոշակ) այս տարի էլ նոյնն է վճարելու, հինգերորդը թէ տանը չարութիւն չանելու համար է ուղարկում ուսումնարան որ իրան անհանգիստ չանէ և այլն.

Իսկ մի նոր նշանված պարոն էլ, ինչպէս ինձ ասացին, որ առաջ ուրիշի մօտ էր ծառայում և այժմ մեծ գումար է ձեռք բերել, իր քրոջը ձրիաբար է տուել ուսման, այսինքն որդեգրուհի է և ուրիշի հաշվով է ուսանում։ Այսօր Սուրբ Խաչ անուանված եկեղեցու տօնն է. դա գտնվում է քաղաքի գիւղում։ Ագուլեցիք՝ թէ մարդ և թէ կին, բոլորը չտապում են դէպի այնտեղ, որոնց հետևում եմ և ես, խոստանալով մի առանձին նամակով նկարագրել ընթերցողին, ինչպէս քաղաքի գիւղը, նոյնպէս և այսօրվան լինելու հանդէսը։

Գաղթնեցի

ՆԵՐՔԻՆ ԼՈՒՐԵՐ

Շնորհակալութեամբ ստացանք դոկտոր Անդրէաս Արծրունու մի նոր գիտական աշխատանք «Krystallographisch-chemische Untersuchung einiger Arsenkiese» վերնագրով։

ԳԱՆԶԱԿԻՑ մեզ գրում հետևեալ. «Սեպտեմբերի 19-ին եկած անձրևի պատճառով այդինեբում աշխատողներից չատերը պատսպարվել էին չարդախ անուանված ծածկոցների տակ։ Դրանցից մէկը բաւական հին լինելով և անձրևից թրջվելով քանդվում է իր տակը ծածկված երեք եղբայրների վրա, որոնցից մէկը մեռնում է իսկ երկուսը ծանր հիւանդ են. Բժիշկները կասկածում են այս վերջինների առողջանալը»։

Խնդրում ենք մեր բաժանորդներից նրանց, որոնք դեռ չեն վճարել «Մշակի» բաժանորդագինը չուտով հասցնել այն խմբագրութեան։ Այն բաժանորդներին, որոնք մինչև տարվայ վերջը չեն վճարի բաժանորդագինը, եկող տարի «Մշակ» չի ուղարկվի։

ԱՐՏԱՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ԱՆԳԼԻԱԿԱՆ ԴԵՍՊԱՆՈՒԹԵԱՆ ԱՆԱՋՈՂՈՒԹԻՒՆԸ ԱՖԳԱՆԻՍՏԱՆՈՒՄ

Անգլիական դեսպանութեան անաջողութիւնների մասին «Times» լրագրին Կալկուտայից հեռագրում են հետևեալը։

«Մեր յարաբերութիւնները Աֆգանիստանի էմիրի հետ չափազանց կրիտիկական բնաւորութիւն ստացան։ Կաբուլի կառավարութիւնը վերջապէս հանեց իր բարեկամական դիմակը և նախադասեց բացարձակ թշնամական դիրք ընդունել Հնդկաստանի վերաբերութեամբ։ Ձեր սեփական թղթակիցը, որ ուղեկցում էր դեսպանութեանը, հեռագրեց որ դեսպանութիւնը դուրս եկաւ Պէշաուէրից և հասաւ Ջումրուդին։ Այդտեղ նա ստացաւ Հնդկաստանի փոխարքայի հրամանը վերադառնալ Պէշաուէր։ Մասնաւոր տեղեկութիւններից երևում է, թէ որովհետև դեսպանութիւնը հրաման էր ստացել ուղևորվել Ջումրուդ, այդ պատճառով մայոր Կավանիարի հէյբերցիների հետ գնաց Ալիմուսվիդ դեսպանութեան, Աֆգանիստան աղատ մտնելու թոյլտուութիւն ստանալու համար։ Էմիրի օֆիցերը Ալիմուսվիդում դրականապէս հրաժարվեց իրաւունք տալ դեսպանութեանը շարունակել ճանապարհը դէպի Աֆգանիստան։ Նա սպառնում էր ընդդիմանալ և ճանապարհների վրա տիրապետող սարերը ծածկեց զօրքերով անցքերը պաշտպանելու համար։ Մայոր Կավանիարիի տեսակցութիւնը էմիրի օֆիցերի հետ երեք ժամ տևեց և թէպէտ այս վերջինին անդադար զգուշացնում էին, որ էմիրը պատասխանատու կը լինի նրա գործողութիւնների համար, օֆիցերը յայտնեց իր անփոփոխ վճիռը ընդդիմանալ դեսպանութեան անցնելուն։ Կասկած չը կայ, որ այդ պաշտօնեան գործում էր էմիրի հրամանների համեմատ, չը նայելով որ Մուֆտաշահ և Ախոր, էմիրի այդ երկու պատասխանատու պաշտօնեաները, վերջին օրերում Կաբուլից ուղևորվեցին դէպի Ալիմուսվիդ։ Այդ երկու անձանց մասին Կաբուլից հաղորդում են, որ նոքա համակրում են Ռուսաստանի հետ պարտադիր և անմիջական յարաբերութիւններ կապելու մտքին։ Հարկաւոր է ուշադրութիւն դարձնել երկու նշանաւոր փաստերի վրա. առաջինը, որ էմիրի օֆիցերի յանդուգն մերժումն եղաւ Հնդկաստանի երբ ասացին, որ առաջ ուրիշի մօտ էր ծառայում և այժմ մեծ գումար է ձեռք բերել, իր քրոջը ձրիաբար է տուել ուսման, այսինքն որդեգրուհի է և ուրիշի հաշվով է ուսանում։ Այսօր Սուրբ Խաչ անուանված եկեղեցու տօնն է. դա գտնվում է քաղաքի գիւղում։ Ագուլեցիք՝ թէ մարդ և թէ կին, բոլորը չտապում են դէպի այնտեղ, որոնց հետևում եմ և ես, խոստանալով մի առանձին նամակով նկարագրել ընթերցողին, ինչպէս քաղաքի գիւղը, նոյնպէս և այսօրվան լինելու հանդէսը։

Գաղթնեցի

ՆԵՐՔԻՆ ԼՈՒՐԵՐ

Շնորհակալութեամբ ստացանք դոկտոր Անդրէաս Արծրունու մի նոր գիտական աշխատանք «Krystallographisch-chemische Untersuchung einiger Arsenkiese» վերնագրով։

ԳԱՆԶԱԿԻՑ մեզ գրում հետևեալ. «Սեպտեմբերի 19-ին եկած անձրևի պատճառով այդինեբում աշխատողներից չատերը պատսպարվել էին չարդախ անուանված ծածկոցների տակ։ Դրանցից մէկը բաւական հին լինելով և անձրևից թրջվելով քանդվում է իր տակը ծածկված երեք եղբայրների վրա, որոնցից մէկը մեռնում է իսկ երկուսը ծանր հիւանդ են. Բժիշկները կասկածում են այս վերջինների առողջանալը»։

Խնդրում ենք մեր բաժանորդներից նրանց, որոնք դեռ չեն վճարել «Մշակի» բաժանորդագինը չուտով հասցնել այն խմբագրութեան։ Այն բաժանորդներին, որոնք մինչև տարվայ վերջը չեն վճարի բաժանորդագինը, եկող տարի «Մշակ» չի ուղարկվի։

թողէք մտնեմ այս գործունեայ խուռն բազմութեան մէջ, ինչպէս որ լուղորդը մշտածուփ ծովի ալեաց մէջ, մի փոքր ուժ առնում նրա գործունեայ ոգիէն, թերևս այնուհետև պէտք գամ նոր գործունէութեան, նոր ասպարիզի մէջ, որ այնուհետև պիտի բանայ իմ առջև մեր կիսամեռ Նոր-Նախիջևանը։

Հոգով և մարմնով վաստակած ուղևորութեանս հինգերորդ օրը հասայ Պետերբուրգ։ Դուք գիտէք իմ ինչ նպատակով եկել էի մայրաքաղաք։ Ցպարանը արդէն գնեցի, այդ մասին բաւական մանրամասնաբար գրութեամբ հաղորդել եմ մեր պատուական քաղաքակցու և մեր բացվելի տպարանի սկզբնապատճառին, պարոն Ց. Խլճեանին որը, թերևս, ձեզ յայտնած կը լինի։ Այստեղ իմ խորին շնորհակալութիւնը չը յայտնել չեմ կարող և պ. Քնափֆին, որ մեծ բարեկամական փաստ ցուցուց ինձ՝ տպարանի գնելում։ Կայ տպարան, որ կարժէ մինչև մէկ միլիոն, իսկ մեր Նախիջևանինը արժեցաւ միայն 3.000 մանէթ, բայց կը հաւատաք, որ մերը ևս նոյն պաշտօնը կը կատարէ, ինչպէս և վերև յիշած թանկագինը։ Մեր Նախիջևանը կունենայ քանի մի շաբաթից մի պատուական, հարուստ, մեր պէտքը բոլորովին լցնող տպարան, ուր մի հատիկ ասեղ պակաս չի լինիլ։ հէնց եկած օրս կարող ենք սկսել տպելու այցելութեան տոմսակէն սկսած մինչև մի մատնագիտական գիրք կամ ժողովրդական պարբերագրութիւն։ Ուրեմն, այդ մասին կարող ենք միմեանց շնորհաւորել և մեր նորահիմն տպարանին շատ երկար կեանք և գործունէութիւն բարեմաղթել։

Ցետ տպարանին սկսեցի լրագրի հոգսը տանելու։ Պիտի իմանաք, որ դորա թոյլտուութիւնը, մանաւանդ գաւառական քաղաքի մէջ, այնքան շատ հեշտ չէ, ինչպէս որ թերևս ձեզմէն շատերը կը կարծեն։ Բայց պարոն Գրիգորիևը ինձ թոյլ տուեց հրատարակելու «Նոր-Նախիջևան» անունով շաբաթաթերթ քաղաքական լրագիր։ Զը մոռանաք, որ նոյն իսկ մայրաքաղաքումն մի ուրիշ, ձեզ յայտնի անձին, թոյլ չը տուին հրատարակելու ոչ միայն լրագիր, այլ մինչև անդամ օրագիր որ հասարակ գրքի հրատարակմանէն չատ տարբերութիւն չունի։ Հասկանում էք թէ ձեզ ինչ ուզում եմ հասկացնել... Ազնիւ բարեկամներ և մանաւանդ ազնիւ երիտասարդութիւն, խնդակից եղէք ինձ ուրեմն։ Քանի մի օրէն ես հետս կը բերեմ ձեզ մի ազնիւ ասպարէզ, ուր դուք հանդէս կը հանէք ձեր ազնիւ խորհուրդները, ձեր կուսական զօրութիւնը և անսպառ աշխոյժը. տէրութիւնը հաչտ աչքով կը նայէ ձեր վրա, միամիտ եղէք։ Հաւատացած եղէք, որ իր ազգը սիրելը երբէք վտանգաւոր զգացմունք երևացած չէ ոչ մեր ողորմած կայսերը և ոչ նորա իմաստուն պաշտօնեաներուն։ Միայն մեր խաւարապաչտ թօռմազաղաները ջանք են արել մեր ազնիւ սէրը դէպի մեր թշուառ ազգը երևցնել իբր դաւադրութիւն քառբօնառներու, որոնց ժողովատեղին էր խաւարաչին գետնափորները և աւերակ տները։ Ո՛չ, ո՛չ, մեր հայ երիտասարդութիւնը կը սիրէ իր ազգը, հանդէս դուրս կուգայ նորա համար աշխատելու հրապարակաւ լոյս աշխարքին մէջ։ Այնպէս չէ, բարեկամներ։ Ուրեմն Նոր-Նախիջևանը ունեցաւ տպարան և լրագիր։ Կեցցէ Նախիջևանի իսկական, անխարդախ բարեկամ Յակոբ Խլճեանը. տայէ Աստուած, որ նորա զաւակներն ևս երթան իրենց ազնիւ հօր շաւղով։ Իսկ որ ինչ կը վերաբերի ուրիշ հանգամանքի, մենք ամենեին գործ չունենք տակէ տակ խուզարկելու թէ՝ այսօր Ն. Մ. ճաշին ինչ կերել է, ընթրիքին ինչ խմել է, իր գործակատարին ինչ ասել է։ Բաւական է որ նա քաղաքի համար օգտաւէտ անդամ է, նորա առանին սրբարանի մէջ օտարի հետաքրքիր աչք մտնելու չէ, օտարի ականջ դրան ծակին դրվելու չէ, օտարի մատ շօշափելու չէ... Սորան կասեն неделикатность. այնպէս չէ, իմ ազնիւ բարեկամք և տակաւին անապական երիտասարդութիւն.... Հազար ու բիւր ափսոս, որ պ. Խլճեանը ազնիւ սրտմտութեամբ վառված պիտի թողնէ Նախիջևանը և գաղթէ օտար տեղ, շատ մեծ կորուստ է այդ մեր քաղաքին, աւելի ափսոսալուն այն է, որ մի քանի թօռմազաղաներ, որ իսկական պատճառ են այդ տեղափոխութեան, ուրախ են այդ հանգամանքին, որպէս թէ քաղաքը մնալու է իրանց սեփականութիւն... Աններելի մոլորութիւն։

Պետերբուրգ մտնողը ուշադրութիւն չէ կարող չը դարձնել այստեղի ձիա-երկաթուղու վրա, վասն զի ամեն տեղ և ամեն բոպէ կը տեսնէ այդ ահագին կառքերը, որ առաջ ու յետ գնումեն և ճամբորդներին հանգիստ կերպով, 3 կոպէկի գընով, քաղաքիս մէկ ծայրէն դէպի միւսն են հասցնում, այսինքն մօտ 7 վերստ։ Դարձեալ միտքս բերի պ. Կարապետեանի խօսակցութիւնը քլուբի մէջ և Խլճեանի մտադրութիւնը—Նախիջևանը և Բօստովը միացնելու ձիա-երկաթուղով։ Հաւատացնում եմ ձեզ, որ եթէ հինգ հոգի Նախիջևանցի հայ փողատէրք խօսք-մէկ լինեն՝ մինչև գալ գարուն կարող էին Լուսաւորչէն մինչև Բօստովի կենտրոնը հասցնել շատ չնչին գումար մսխելով. յետոյ այս և այն կողմ տարածելը, ճոխացնելը, ճիւղեր ձգելը—արդէն ժամանակի խնդիր կը լինէր։ Համոզված եմ, որ Նախիջևանը տարին-տարենական հարիւր հազարների տնտեսութիւն կանէր, որոց քառորդ մասը կերթար այդ պարոնների գըրպանը։ Չը գիտեմ ով առաջարկել է մեր աղբալից չուկան դարձնել դալար պարտէզ և հոտաւէտ ծաղկոց։ Շէն կենայ մտածողը։ Արէք, էագործեցէք այդ բանը. շատ լաւ կը լինի. չէք սխալիլ։ Չը գիտեմ ով առաջարկել է մեր այժմվայ քլուբի և Ց. Պապասենեանի տան առջև բուլվար չինել։ Այդ էլ լաւ է և շատ օգտաւէտ է։ Այդ ևս պէտք է էագործել. և եթէ կուզէք իմ անկեղծ կարծիքը լսել՝ որքան շուտ անէք, այնքան լաւ է։

Իմ առջև, պ. Մինաս Պալասանեանը, խօսակցութեան մէջ, առաջարկեց ամեն տների դիմաց փողոցի մէջ, տնկել վայրի ծառեր, որով անշուշտ մեր քաղաքը կը դառնայ մի ահագին հովանի պարտէզ, որի պատճառաւ Բօստովէն շատ գերդաստաններ կուգան բնակվելու Նախիջևանի մէջ։ Այդ ևս շատ օգտաւէտ և կատարելու կողմանէ շատ հեշտ առաջարկութիւն է։ Այդ ևս աշխատեցէք կատարելու։ Մեր քաղաքագլխի սուրբ պարտաւորութիւնն է անդամ դումայի, ուպրավայի և պօլիցիայի օգնութեամբ որքան կարելի է շուտ էագործել այդ բարի, օգտաւէտ ձեռնարկութիւնը։

Պարոն Կարապետեանը հետամուտ է (ես պ. Խլճեանին չեմ յիշում, վասն զի նա քաղաքէս ելլելու է) Նախիջևանէն Բօստով ձիա-երկաթուղի չինելուն։ Այդ բանն ևս պէտք է Նախիջևանին, ինչպէս որ հացը և ջուրը։

Պարոն Խալիպեանը, տեսնելով որ ամբողջ քաղաքը սալայատակ անելու դեռ ևս փող չը կայ, ուզում էր գոնէ փողոցի անկիւնների քարաշէն, բարձրադիր անցքեր չինելու (ինչպէս որ կան պ. պ. Սարգիրեանի, Ե. Փոփովի, Մուրատեանովի և այլն տներէն դէպի բուլվար), որ գարնան և աշնան ժամանակ ողորմելի աշակերտներուն և մանաւանդ աշակերտուհիներուն ազատել այն խեղդիչ ցեխերէն, որոնք Պոնտեան ճախճախուտներու նման չաբաթներով ու ամիսներով կեցած են մեր փողոցների մէջ։ Այդ բանն ևս արէք. շատ պէտք բան է ոչ միայն առողջութեան, այլ և քաղաքացոց առտնին տնտեսութեան կողմանէ։ Ո՞րքան ոտնամաններ է, որ մաշվում և վնասվում են այդ միջոցին. այդ՝ ես բանի տեղ չեմ դնում տակաւին։ Բայց որքան բանէ գործէ մնում է խեղճ ժողովուրդը։

Մէկ խօսքով, Նախիջևանի մէջ ոչ խելօք, բարեսէր մարդու պակասութիւն կայ, ոչ փողի և ոչ երախտագիտութեան. մեր ամենավատ թշնամին է մեր ասիական անտարբերութիւնը և մի փոքր էլ մեր ասիական ծուլութիւնը։ Ան չէ ան՝ պ. Տրապիզոնեանը սկսաւ արդեօք իր տան առջևի մայթը (тротуаръ) չինելու։ Լսել եմ որ՝ իր ապաքեայ քօռռիտորը արդէն վերջացուցել է։ Ուրեմն պէտք է այժմ մի փոքր անց ու դարձ անողներու վրա ևս ակն տանել։

(Կը շարունակվի)

կու իշխանների ներկայութեամբ, որոնք ուղեկցում էին դեսպանութեանը և ներկայ էին մայոր Կովանեարիի և էմիրի օֆիցերի խօսակցութեան ժամանակ և երկրորդ, որ և ռուսաց դեսպանը դեռ ևս գտնվում է Կաբուլի մէջ։ Այժմ դեսպանութիւնը անյապաղ կը վերադառնայ։ Ի նկատի ունենալով Աֆղանիստանի էմիրի շարունակ յանդուգն և թշնամական վարմունքը, որ սաստկացել է մեր ազգային արժանաւորութեան հասցրած վերջին վիրաւորանքով, այլևս անկարելի է պահպանել բարեկամական յարաբերութիւններ այդ բարբարոսի հետ։ Եթէ մինչև անգամ կարելի լինէր պահպանել բարեկամութիւնը Աֆղանիստանի հետ, մենք այն ժամանակ պէտք է կորցնենք բոլոր հեղինակութիւնը Հնդկաստանի մեզ հպատակ իշխանների և ազգաբնակութեան առաջ։ Ռուսաստանի այժմեան քաղաքականութեան պատճառով, անգլիական ժողովուրդը և կառավարութիւնը կատարելապէս նախազգուշացրած են և յոյս պէտք է ունենալ, որ այդ նշանաւոր հարցը սահմանակից քաղաքականութեան մասին այուհետև չի քննվի միայն Հնդկաստանի շահերի տեսակէտից նայելով։ Այդ հարցը մինչև այժմ նահանգական հարց էր, իսկ այժմ նա դառնում է կայսերութեան հարց և մի և նոյն ժամանակ նշանաւոր հարց։ Հնդկաստանի փոխարքայից աւելի լաւ ոչ ոք չէ հետևում այդ հարցի զարգացմանը և նա շատ լաւ հասկանում է, որ միայն Հնդկաստանի և անգլիական արտաքին գործերի մինիստրութեան ընդհանուր և եռանդոտ աշխատանքներով կարելի է դուրս գալ այդ վտանգաւոր դրութենից և մի և նոյն ժամանակ բաւականացուցիչ հետևանքներ ստանալ։ Հնդկաստանի կառավարութիւնը ունի ընդարձակ պատերազմական միջոցներ, որոնցով նա կարող է պատժել էմիրի վերաւորող և անարգող վարմունքը։ Մի և նոյն ժամանակ նա շատ լաւ հասկանում է, որ էմիրը խաղալիք է Ռուսաստանի ձեռքում, որ կանգնած է Աֆղանիստանի եաւեը deus ex machina-ի դերով։ Այդ պատճառով այն միջոցները, որոնք պէտք է գործ դրվեն էմիրի վերաբերութեամբ ոչ թէ Հնդկաստանի քաղաքականութեան հարց է, այլ անգլիական կայսրութեան արտաքին գործերի մինիստրութեան խնդիր, որ պէտք է վճռվի անգլիական կաբինէտի սկզբունքների համեմատ։ Առ այժմ փոխարքայի նպատակը պէտք է լինի մեկնել Աֆղանիստանի բնակիչներին, որ մենք մտադիր չենք նրանց հետ թշնամաբար վարվել և աշխատել մեր կողմը դարձնել բոլոր սահմանակից ցեղերին։ Հէյբերցիները այս դէպքում իրանց լաւ էին պահում և տրամադրված են մեզ հետ բարեկամ մնալ։»

ՆԱՄԱԿ ԹԻՒՐՔԻԱՅԻՑ

Կ. Պոլիս 14 սեպտեմբերի 78

Պոլսի հայերու մտքերն գրաւող խնդիրն գաղթականութեան խնդիրն է. գաւառներէ հեռագիրներն կը հասնին, նամակներ կուգան հայ ժողովուրդն ամեն կողմէ գաղթելու կը պատրաստուի, ռուսաց բանակի քաշուելն Հայաստանի հայերու համար մեծ աղէտներու դուռ պիտի բանայ, Կարնոյ առաջնորդն կը նկարագրէ թէ ինչպէս թիւրքերն պատրաստուած են հայերու դէմ։ Պատրիարքարան և ազգային վարչութիւն իրենց ամեն ճիգն կընեն չարեաց առաջն առնելու, պատրիարքն դիմեց դեսպանաց և առ Դուռն. Դուռն ամեն խոստում տուաւ, այն խոստումներն զոր միշտ կուտայ։ Սեպտեմբերի 5-ին պատրիարքն հրաւիրեալ էր Անգղիոյ դեսպանատունն երթալ, ուր գնաց Խրիմեան եպիսկոպոսի հետ։ Երկար տեսակցութիւն ունեցաւ, բայց ինչ օգուտ, Անգղիա կարծես ամեն կերպով հայոց չարիքն կը փափագի, Հայաստանի բարեկարգութեան համար ինչ առաջարկութիւն որ ըրաւ ամենքն ալ Անգղիոյ դեսպանի կողմէ ընդունելութիւն չը գտան. Հայաստանի մէջ հայ կառավարիչներ հաստատել, կամ եւրոպական յանձնաժողով մը երթայ ի Հայաստան՝ ասոնք են ազգին փափագներն, բայց Անգղիա այս երկու առաջարկութեանց դիմադիր է։ Ձեզ մի գաղափար տալու համար թէ ինչ աստիճան թշնամական հոգով կը վարուին մեզ դէմ Թիւրք և անգղիական կառավարութիւններն սաչափն ըսեմ թէ պատրիարքն խնդրեր է որ դէթ Կարնոյ կառավարիչ Իսմայիլ-փաշա պաշտօնէն հրաժարուի, բայց անգղիական դեսպանն այդ առաջարկութիւնն ալ մերժած է։

Իսմայիլ-փաշա այն անձն է որ երբ Միթհատ-փաշայի ժամանակ Կարնոյ կուսակալ անուանեցաւ. պատրիարքարանն սաստիկ բողոքեց։ Այդ փաշան հայերու երդուեալ թշնամին է. քիւրդ Իսմայիլ-փաշա կանուանի սակայն ճիշդն ղուրբա (գայլ) Իսմայիլ-փաշայ է, իւր գործած չարիքներն այս անուանը ղինքն արժանացուցած են. Տաճկաստանի բարեկարգութիւն կասեն, եւ այսօր Հայաստանի վարչութիւնը այսպիսի ապիրատ անձի մը կը յանձնուի. և տակաւին մեզ բարիք յուսամք անկեղծ թիւրքական դաշնադրութենէ։ Ցիմարութիւն։

Սեպտեմբերի 8-ին ազգային ընդհանուր ժողովը գումարեցաւ, դռնփակ նիստ, մասնաւորապէս գաղթականութեան խնդրոյն համար։ Պատրիարքն յայտնեց դեսպանաց հետ ըրած բանակցութիւններն և մասնաւորապէս Անգղիոյ դեսպանին ըրած այցելութիւնը. ժողովը որոշեց իշխանութիւն տալ պատրիարքի գաղթականութեան, հարստահարութեանց և մասնաւորապէս Հայաստանի բարեկարգութեանց համար կարեւոր միջոցներն տնօրինել և Պէրլինի դաշնագրի 61-ին յօդուածի գործադրութիւնն փութացնել։ Ամենուն փափագն և նպատակն է տեսնել Հայաստանի մէջ եւրոպական յանձնաժողով մը բարեկարգութեանց համար, առ այս պիտի նկրտին պատրիարքի և ազգային վարչութեան բոլոր ջանքերն։

Այս միջոցիս քաղաքական ժողովի անդամոց թիւն պակասեալ էր. ընդհանուր ժողովն այդ պակասութիւն պիտի լրացնէ. հարկ է գիտնալ որ արդի քաղաքական ժողովն վաճառական և ազատ անձերէ կազմեալ է. Բ. Դրան հայ պաշտօնեայներէ ոչ ոք անդամ է։ Եւ մինչ ազգային հարուստներն ազգային պաշտօն վարելէ հեռի կը կենան, մի երեւելի անձ Սիմոն-պէյ Մազուտեան ամեն ճիգ կը թափէ քաղաքական ժողովոյ անդամ լինելու համար, և անդամ մը որ քաղաքական ժողովոյ անդամ լինի ատենապետութիւնը ապահովէ որ ձեռք անցնէ և այնուհետև ալ ուզած դերն կը խաղայ։ Այս պէյը, թէպէտ Դրան պաշտօնեայ չէ, այլ մեծ յարաբերութիւններ ունի փաշայներու հետ և մասնաւորապէս արդի մեծ վիզիր Սավֆէթ-փաշայի սիրելին և բարեկամն է, և մեծ թիւրքաց սեղանաւորն։ Անշուշտ Սավֆէթ-փաշայի դրդմամբն է որ կուզէ ազգային վարչութեան գլուխն անցնել ինչպէս որ էր երեք տարի առաջ սակայն յուսալի է որ ընդհանուր ժողովն բաւական խելացի պիտի լինի այդ անձէն չը խաբուելու համար։

Ցաջորդ նամակաւ ազգային և տեղական կարեւոր նիւթու վրա ընդարձակ տեղեկութիւններ կը հաղորդեմ։

Հ.

ՆԱՄԱԿ ՖՐԱՆՍԻԱՅԻՑ

Փարիզ 15/27 սեպտեմբերի

Ֆրանսիայի ներքին քաղաքականութիւնը սկըսում է կենդանանալ. մարդ ակամայ զգում է, որ ազգային ժողովի և սենատի նիստերի սկսվելը մօտենում է։ Բացի այն, որ ֆրանսիական հանրապետութեան մինիստրներից երկուսը Լէօն Սէ և Ֆրէյսինէ գնացին զէպի հիւսիս ճանապարհորդելու և ամեն տեղ դէպքից օգուտ քաղելով ճառեր կարդացին և մեկնեցին իրանց հայեացքները ներկայ քաղաքականութեան մասին, բացի այդ Գամբետան էլ երկար լռութենից յետոյ հարկաւոր համարեց մի քաղաքական ճառ կարդալ, որ մինչև այժմ խօսակցութեան և լրագիրների յօդուածների առարկայ է դարձել։

Գամբետան հարկաւոր համարեց ճանապարհորդել հարաւում և այնտեղի փոքրիկ քաղաքներից մէկի մէջ, Ռօմանի մէջ, կարդալ ճառ, որովհետև հիւսիսային քաղաքները արդէն այցելել էին վերոյիշեալ երկու մինիստրները։

Լրագիրները լիքն են Գամբետայի ճանապարհորդութեան նկարագրութեամբ։ Լիոնից սկսած նրան ամեն տեղ ընդունում էին ոգևորութեամբ. քաղաքապետները ճառեր էին կարդում, օրիորդները նրա առաջ ծաղիկներ էին սփռում և ազգային երգեր էին երգում, ամեն տեղ լինում էր երաժշտութիւն և այլն։ Մի խօսքով բոլոր միջոցները գործ էին դրված հանրապետութեան ապագայ նախագահին հանդիսաւոր կերպով ընդունելու համար։

Գամբետայի Ռօմանի մէջ ասած ճառը քաղաքական մեծ նշանակութիւն ունէ։ Գամբետան վճռողական և որոշ կերպով մեկնեց այն նախագիծը, որին նա կը հետևի, երբ սենատի անդամների մեծամասնութիւնը հանրապետականների կողմը կը լինի։ Նրա կարծիքով վարչութեան բոլոր ճիւղերի համար պէտք է հանրապետական պաշտօնեաներ նշանակել, իսկ հանրապետութեան թշնամիներին բոլորովին հեռացնել. դատաւորները պէտք է անփոփոխ մնան, միայն նոքա էլ հանրապետականներ պէտք է լինեն, պէտք է հրաժարական տան նոյնպէս բօնապարտեան գեներալները։

Գամբետան վճռողական կերպով յայտնեց, որ հանրապետութեան նախագահ մարշալ Մակ-Մահոն չէ էլ մտածում հրաժարական տալ, այլ նա կը շարունակէ իր պաշտօնակատարութիւնը մինչև նրա նախագահութեան ժամանակամիջոցի լրանալը։ Գամբետան խոստացաւ, որ երբ իր ցոյց տուած բոլոր վերանորոգութիւնները կիրագործվեն, նա կառաջարկի թողութիւն տալ բոլոր կոմունիստներին։ Նրա ճառի այս բաժինը շատ լաւ տպաւորութիւն գործեց ֆրանսիական ազգային ժողովի արմատական կուսակցութեան վրա, այնպէս որ նրանցից շատերը համակրական նամակներ ուղարկեցին Գամբետային։ Այժմանից կարելի է հաստատ ասել, որ բոլոր արմատականները ազգային ժողովի քուէարկութիւնների ժամանակ ձայն կը տան յօդուտ Գամբետայի առաջարկութիւնների։

Դեռ մի քանի ժամանակ առաջ այդ կուսակցութիւնը Գամբետայի օրերիմ թշնամին էր, իսկ այժմ նա հաշտվել է իր հակառակորդի հետ... Ֆրանսիայում այսպիսի փոփոխութիւններ շատ հեշտ են պատահում, Աւելորդ եմ համարում գրել, որ կղերականները, բօնապարտեանները և առհասարակ բոլոր միապետականները զայրացած են Գամբետայի դէմ։

Հայերը շարունակում են իրանց վրա դարձնել Եւրոպայի ուշադրութիւնը։ Մինչև այժմ լրագիրները զբաղված էին հայոց ներկայացուցիչներով կօնդրէսում, Հայաստանի մէջ մտցնելի վերանորոգութիւնների խնդրով, իսկ այժմ նոքա երկար յօդուածներ են տպում Խորէն եպիսկոպոս Նարբէյի ծագումի մասին։

Այդ եպիսկոպոսը չը կարողանալով հայերի համար կօնդրէսից մի առանձին արտօնութիւն ստանալ, աշխատում է հաստատել, որ ինքն իշխան է և Լուսինեանների ծագումից։ Մօտ ժամանակներում «Temps» լրագիրը այդ հարցի վերաբերութեամբ մի երկար յօդուած տպեց, որով լրագիրը Խորէն Նարբէյի իշխան լինելը բաւական կասկածաւոր էր համարում։

Մօտ ժամանակներում Փարիզի աշխարհահանդիսին նիւթեր ներկայացնողներ ընծաներ ստացան։ Ռուսաստանի բաժինը նոյնպէս բաւական ընծաներ է ստացել։ Խօսում են, որ Կովկասեան գինիներից Մադրասայի գինին մեդալ է ստացել։ Թէ որքան ճիշդ է այս լուրը կարելի է մի քանի օրից յետոյ իմանալ։

Ռուսաց փողերի գինը այստեղ մի քանի ժամանակ առաջ բարձրացել էր, բայց այժմ նոքա դարձեալ ընկել են։ Այժմ ռուսաց հարիւր ռուբլ այստեղ արժէ 251 ֆրանկ։

Օ.

ԱՐՏԱՔԻՆ ԼՈՒՐԵՐ

—«Polit. Corresp.» լրագրի Թղթակիցը գրում է Կ. Պոլսից. «Ներսէս պատրիարքը հայոց ազգային ժողովի փակ նիստի մէջ սաստիկ գովեց ռուսներին։ Նա յայտնեց, որ ռուսները շատ աշխատեցին հայոց վիճակի բարւոքման համար, մինչդեռ անգլիացիք բաւականացան դատարկ խօսքերով և խոստումներով։ Ճառի այդ բաժինը գոհունակութեամբ ընդունվեցաւ։ Պատրիարք յետոյ ասաց, որ Էրզրումի վիլայեթից գաղթականութիւնը այնքան նշանաւոր չէ, ինչպէս խօսում էին։ Գաղթել են միայն մի քանի հարիւր ընտանիքներ, որոնք կարծում էին, որ ռուսները կը մնան իրանց երկրում և այդ պատճառով թիւրքերի մասին վատ էին խօսում։

—Տրապիզոն «Daily News» լրագրին հեռագրում են, որ Բաթումից գաղթաց չորս հազար ընտանիքներ դեռ ևս Տրապիզոնումն են գտնվում և միջոց չունեն ապրելու համար։ Մինչև այժմ նրանց համար բնակարաններ չեն գտել։

—«Միջազգային ընկերութեանը» Վիէննայից հեռագրում են, որ սեպտեմբերի 27-ին աւստրիական զօրքերը գրաւեցին Զվօրնիկ։ Ամրոցի վրա տատանում է կայսերական դրօշակը։ Քաղաքի մէջ 14 թնդանօթներ գտան։

—Բերլինից հեռագրում են, որ սոցիալիստների դէմ ուղղած օրէնքի նախագիծը քննող մասնաժողովը սկսեց նախագծի երկրորդ ընթերցանութիւնը։ Առաջին ընթերցանութեան ժամանակ նախագծի մէջ մի քանի փոփոխութիւններ են արել։ Մասնաժողովը վճռել է, որ օրէնքը միայն երկու և կէս տարի, այսինքն մինչև 1880 թ. այժ ունենայ։ Մինիստր կոմս Էյլենբուրգ յայտնեց մասնաժողովին, որ միացեալ կառավարութիւնները այդ ժամանակամիջոցը փոքր են համարում։ Մասնաժողով յետաձգեց վիճաբանութիւնները նորից խորհրդակցելու համար։

—«Մասիսի» մէջ կարդում ենք. «Կը լսենք թէ Ս. Պատրիարք հայրը վերջին օրերս Հայաստանի այլ և այլ կողմերէն ծանուցուած հարստահարութեանց տեղեկագիրը չինելով վեց մեծ տէրութեանց դեսպաններուն ղրկել է իր այցեռմսին հետ»։

«ՄՇԱԿԻ» ՀԵՌԱԳԻՐՆԵՐ

ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ԸՆԿԵՐՈՒԹԵՆԻՑ

ԿՈՊԵՆՀԱԳԷՆ, 27 սեպտեմբերի (9 հոկտեմբերի)։ Սր. Խաչի կղզու նահանգապետը հեռագրում է. «Ապստամբութիւնը զսպված է, Ֆրէդերիկստադ քաղաքի կէսը և շաբարի 50 պլանտացիաներ այրված են։ Շաքարի գործարանները կարող են նորոգվել։ Քսան պլանտացիաներ անվնաս մնացին։ Ցայտնված է պատերազմական դրութիւնը։»

Ս. ՊԵՏԵՐԲՈՒՐԳ, սեպտեմբերի 28-ին։ «Новое Время» լրագրին Լօնդօնից հեռագրում են. «Ամերիկայի իրլանդացիների շրջանում դիտաւորութիւն կայ ուղարկել նշանաւոր օգնութիւն Աֆղանիստանի էմիրին, ընդհանուր թշնամու (Անգլիայի) դէմ պատերազմելու նպատակով։ Իրլանդիայի ազգային մամուլը սաստկացնում է իր յարձակումները Բիկոնսֆիլդի մինիստրութեան դէմ։ Պարլամենտի իրլանդացի պատգամաւորները այս օրերս կը սկսեն ճանապարհորդել ամեն մեծ քաղաքներում, իրլանդական միտինգներ գումարելու և իրանց կուսակցութեանը աւելի լաւ կազմակերպութիւն տալու նպատակով։»

Ս. ՊԵՏԵՐԲՈՒՐԳ, 27 սեպտեմբերի (9 հոկտեմբերի)։ «Голосъ» լրագրին Վիէննայից հեռագրում են. «Բարձր Դրան բողոքը աւստրիական զօրքերի վարմունքի դէմ գրաւած նահանգների մէջ սաստիկ դժգոհութիւն է պատճառում այստեղ։ Անդրաշէի կուսակիցները գործ են ածում այդ ընդհանուր զգացմունքը նորա օգտին, հաւատացնելով որ Թիւրքիայի բողոքը հետևանք է Ռուսաստանի ազդեցութեան, որի ցանկութիւնն է խռովութիւն գցել Աւստրիայի և Թիւրքիայի մէջ, այն նպատակով որ մեղադրելով աւստրիական զօրքերը անողորմ վարմունքի մէջ բնակիչների դէմ, մոռացնել տայ իր սեփական խրատութիւնները։ Աւստրիայի յարաբերութիւնները Բ. Դրան հետ շատ լարված են։»

ՑԵՏԻՆԻԷ, 27 սեպտ. (9 հոկտ.)։ Սկուտարի քաղաքում թիւրք կանոնաւոր զօրքերի մէջ ծագել է մի ապստամբութիւն։ Զօրականները խմբերով անցնում են Ալբանիայի Լիգաի (միաբանութեան) կողմը։ Կառավարութեան դեռ ևս հաւատարիմ մնացած զօրքերը նոքերս մի բաւական արիւնահեղ ճակատամարտ են ունեցել ապստամբվածների հետ։

Յ Ա Յ Տ Ա Ր Ա Ր Ո Ւ Թ Ի Ւ Ն Ն Ե Ր

Լոյս տեսաւ «Թուաբանական խնդիրների ժողովածու», գրաւոր վարժութիւն տարրական ուսումնարանների համար I մաս. աշխատասիրութիւն Զախարովի և Պաուլսոնի եղանակով. Բոգրատայ Միրիմանեանց:

Ծախվում է Զ. Գրիգորեանցի գրախանութում:

ՄԵՏԱՔՍԵՂԷՆ ԱՊՐԱՆՔՆԵՐԻ ՄԱԳԱԶԻՆ ԹՈՎՄԱՍ ԽԱՆԴԱՄԻՐՈՎԻ (Նախկին ԽԱԼԱԹՈՎԻ) տեղափոխված է Վելյամինովսկայա փողոցի վրա գտնվող Խոսրովի տանից Երևանեան հրապարակի վրա ԽԱՐԱԶՕՎԻ տանը, Թիֆլիսի փոխադարձ կրէդիտի ընկերութեան շինութեան տակ: Յայտնելով սրա մասին Թիֆլիսի հասարակութեան, մեծայոյս եմ որ նա իր այցելութիւնները չի պակասեցնի իմ մագազինից, հաւատացած լինելով, որ ինձանից դուրս եկած ապրանքները լաւ յատկութիւններ ունեն և գները չատ չափաւոր են:

3—6

МАГАЗИНЪ шелковыхъ товаровъ ТОМАСА ХАНДАМИРОВА (бывшій ХАЛАТОВА) перемѣщенъ съ Вельяминовской улицы дома Хосроева на Эриванскую площадь въ домъ ХАРАЗОВА, подъ Тифлисскимъ обществомъ взаимнаго кредита. Объявляя о семъ Тифлисской публикѣ льщу себя надеждою, что она не оставитъ своимъ посѣщеніемъ мой магазинъ съ тою увѣренностью, что отпускаемые мною товары будутъ доброкачественные и цѣны самыя умѣренныя.—

3—6

ԿՈՎԿԱՍԵԱՆ ՈՒՍՈՒՄՆԱՐԱՆԱԿԱՆ ՌՕՏԱՆ (учебная рота) հրաւիրում է ցանկացողներին կապալով վերցնել ռօտայի մէջ ծառայողների համար հարկաւոր եղած ՄՍԻ ԵՒ ՄԻՒՍ ՄԹԵՐՔՆԵՐԻ ՀԱՍՑՆԵԼԸ: Ցանկացողները հրաւիրվում են աճուրդին ներկայ լինելու համար ռօտայի զօրատունը, բինկերների ուսումնարանի մօտ, սեպտեմբերի 25-ին առաւօտեան 10 ժամին:

Լոյս տեսաւ

«ՆԱԽԱՊԱՇԱՐՄՈՒՆՔ»

Անունով մեր աշխատասիրութեան I հատորը, որ պարունակում է իր մէջ մեր կեանքից առնված 600-ից աւելի նախապաշարմունքներ:—Գինն է 50 կ.:

Կարելի է ստանալ հետևեալ հասցէով.—«Въ Тифлисъ.—Кавказская книжная торговля З. П. Грикурова.»

Ց. Նազարեանց

Դուրս եկաւ մամուլի տակից և վաճառվում է «Կովկաս. գրավաճ. Զաք. Գրիգորեանցի»:

1. Պօլուիմպէրիալ—կատակերգութիւն, երկու արարուածով (մանկական թատրոն. Թարգմ. Ց. Նազարեանց. տպագրութիւն Զ. Գրիգորեան.

Գինն է 20 կոպէկ:

2. Նախապաշարմունք—I հատոր. աշխատասիրութիւն Ց. Նազարեանց:

Գինն է 50 կոպէկ:

—

Շուտով դուրս կը գայ մամուլի տակից:

1. Ղուկասեանց—ընթերցարան. երր. տպագ.

Գինն է 40 կոպէկ:

Մամուլի տակից դուրս եկաւ և ծախվում է Ս. Մանդինեանի հետևեալ աշխատութիւնները.

1) Նահապետական և հայրենի աշխարհ, երրորդ տարվայ ուսմունք և ընթերցմունք. գինն է 65 կ.:

2) Համառօտ մանկավարժութիւն. գինն է 1 ր. 50 կ.:

5—6

Ներսիսեան Հայոց Ազգային-Հոգևոր դպրոցի հոգաբարձութիւնը հրաւիրում է ցանկացողներին յանձն առնել տալ դպրոցի որդեգիրներին կօշիկներ: Այս մասին նշանակած է աճուրդ (առանց կրկնաճրդի) հոգաբարձական խորհրդարանում սեպտ. ամսիս 27-ին, երեկոյեան 8 ժամին: Պայմանների մասին կարելի է տեղեկանալ դպրոցի դիւանատան մէջ ամեն օր, բացի կիւրակէից և տօներից, ցերեկվայ 10-ից մինչև 12 ժամը:

ԹԻՖԼԻՍԻ ՔԱՂԱՔԱՅԻՆ ՎԱՐՉՈՒԹԻՒՆԸ յայտնում է, որ հոկտեմբերի 18-ին ներկայ տարվայ իր ներկայութեամբ կը լինի աճուրդ առանց կրկնաճուրդի Մնացականեան կամուրջի մօտ Քուռ գետի վրա գտնվող երկու պարոմների պահելը կապալով տալու համար երեք տարի ժամանակով:

1—2

ՔԱՐԱԾՈՒԽ „ՌՈՒՍԱՍՏԱՆ“ ՇԱԽՏԻՑ

(ՀԱՆՔԻՑ), ՈՐ ԳՏՆՎՈՒՄ Է ՋԷԼՕՐԱՆԻ ԱՐՈՒԱՐՋԱՆԻ ԿՈՒՐՄԷՔԱ ԳԻՒՂՈՒՄ

ԸՆԿ. ՆԷՅՄԱՆ—ՇԷՆԻՆԳ

Ծախվում է ՇԷՆԻՆԳԻ ՊԱՎԻԼԻՕՆՈՒՄ ՄԵԾ ՔԱՆԱԿՈՒԹԵԱՄԲ ՄԻԱՍԻՆ ԱՄԲՈՂՋ ՎԱԳՕՆՆԵՐՈՎ ՆՐԿԱԹՈՒՂՈՒ ԿԱՅԱՐԱՆԻՑ ՊՈՒԴԸ 25 ԿՕՊ., ԻՍԿ ՓՈՔՐ ՔԱՆԱԿՈՒԹԵԱՄԲ ԿԱՐԵԼԻ Է ԳՆԵԼ ՔԱՂԱՔԻ ՄԷՋ ԳՏՆՎՈՂ ՊԱՀԵՍՏԻՑ ՊՈՒԴԸ 28 ԿՕՊԷԿՈՎ:

---

1. Ն. Տէր-Ղևոնդեանի Մայրենի լեզուի առաջին տարին վեցերորդ տպագրութեամբ, բազմաթիւ պատկերներով զարդարված և նորանոր առացուածներով, առածներով, հանելուկներով և յօդուածներով լրացրած: Գինն է 35 կոպէկ: Գումարով առնողներին զիջումն կը լինի:

2. Մայրենի լեզուի երկրորդ տարին չորրորդ տպագրութիւն, նոյնպէս նորանոր պատկերներով զարդարած և մասնաւոր փոփոխութիւններով լրացրած: Գինն է 40 կոպ.: Գումարով առնողներին զիջումն կը լինի:

Ծանօթութիւն. Վերոյիշեալ գրքերը ընդունված են Թիֆլիսի Թեմի գ. Թեմ. վերատեսչից իբրև սկզբնական դասագիրք Հայոց լեզուի իր ձեռքի տակ եղած բոլոր ուսումնարաններում: Սոքա ընդունված են նոյնպէս Կովկասի հայոց ուսումնարաններից գրեթէ ամենում, նմանապէս և միւս Թեմերի ուսումնարաններից շատերում: Վաճառվում են բացառապէս Կենտրոնական գրավաճառանոցում: Մայրենի լեզուի գ. և դ. տարին պատրաստ կը լինի մինչև սեպտեմբերի 10-ը:

ԿԵՆՏՐՕՆԱԿԱՆ ԳՐԱՎԱՃԱՌԱՆՈՑՈՒՄ

(ԱՐԾՐՈՒՆՈՒ ԳԱԼԼԷՐԷՈՒՄ)

Վաճառվում են հետևեալ հայերէն գրքերը՝

	Ր.	Կ.
1. Ն. Տէր-Ղևոնդեան՝ Մայրենի լեզու. ա. տարի վեցերորդ տիպ. . . .	—	35
2. » » բ. տարի չորրորդ տիպ. . . .	—	40
3. » » գ. և դ. տ. երկր. տիպ. . . .	—	70
4. Ղ. Աղայեանց՝ Ուսումն Մայրենի լեզուի, երրորդ տիպ.	—	15
5. Տէր-Ստեփանեանի՝ Սկզբունք քրիստոնէական հաւատոյ.	—	50
6. Գ. արքեպ. Այվազեան՝ Նախակրթանք գրաբար լեզուի մ. ա. հինգերորդ տիպ. . . .	—	40
7. Տէր-Դաւթեանց՝ Русское Слово	—	35
8. Աբովեանց՝ Հայոց պատմութիւն երկրորդ տիպ.	—	60
9. Հատընտիր ընթերցուածք ի մատենագրաց նախնեաց՝ հանդերձ ծանօթութեամբք Վիէննա Թոռնեան՝	4	—
10. Թորոս Լևոնի պատմական վէպ ազգ. կեանքից	1	—

Այս օրերս կը ստանանք Վենետկից Առձեռն բառարաններ, Հայաստանի քարտէզներ և ընտիր մատենագիրների աշխատութիւններից շատերը:

ՍԵՊՏԵՄԲԵՐԻ 29 — Տ Ե Ղ Ե Կ Ա Ց Ո Յ Ց — ԹԻՖԼԻՍ. 1878.

ԹԻՖԼԻՍԻ ՎԱՃԱՌԱՆՈՑ (Սեպտեմբերի 28-ին)

	Ր.	Կ.
Ոսկին (պօլուիմպերիալը)	8	25
Հին 82 պր. մ. արծ. 1000 մ.	1520	—
Հին 20 կ. 72 պր. 1000 „	1235	—
Վիգրիշնի 5% առաջի փոխառութեան տոմ. 100 »	232	—
Երկրորդ 5% վիգրիշնի »	228	—
Մարսելի կուրսը 251½—	100	—
Լօնդօնի կուրսը Օդեսայի վրա.	9	97
Վենայի կուրսը աժէ 121 գլ.	100	—
Դուրեմի բարաթը. . .	5	70
Առևտրական բանկի ակցիան 200 մ. . . .	315	—
Փօթի Թիֆլիսեան երկաթուղու ակցիան 125 մ.	102	—
Շաքարը բրօցկու . .	7	60
„ միւս տեսակը.	7	45
„ չաքարաւազը.	6	40
„ տրանզիտը. .	6	—
„ մաքուր վճարած	11	50
Բամբակը Երևանու Ամերիկայի սերմից. . .	8	—
Միւս տեսակը հին սերմից.	7	—
Բուրդը Թուշի . . .	7	25
„ Թարաքամի .	4	—
Ալիւր Շորագալու . .	2	—
„ Երևանի. . . .	—	—
Գարին.	1	30
Մոմը բնաճարպի (стеар.)	12	40
Մետաքս Նուխվայ. .	210	—
Կախեթունը. . . .	140	—
Կոկոնը Նուխվայ (բոժ.)	45	—
Ֆրիզոնը (լասը) Ագուլեաց	60	—
Կոֆէն մօկօի. . . .	26	—
„ մվանի . . .	22	—
„ մարտինիկօյինը	17	—

ՀԵՌԱԳԻՐ

	Ր.	Կ.
Կովկասի և Անդրկովկասի քաղաքները . . .	1	
Ռուսաստան .	2	
Աւստրիա . .	3	
Անգլիա. . . .	4	
Գերմանիա. . .	2	88
Ֆրանսիա . . .	3	75

ԱՆԴՐԿՈՎԿԱՍԵԱՆ ՄԱՆԿԱԲԱՐՁԱԿԱՆ ԴՊՐՈՑ

(Վէրայի վրա № 38)

Ծննդկանների ընդունելութիւնը ցերեկվայ և գիշերվայ ամեն ժամանակ, օրը 50 կոպէկ վարձով, իսկ չքաւորներին անվարձ: Առանձին սենեակներում ամիսը 30—50 րուբլ: Կանանց հիւանդութիւնների բաժանմունքի մէջ վարձը ընդհանուր սենեակում 18 րուբլ, իսկ մասնաւոր սենեակներում 30 րուբլ ամսական:

Երթևեկ հիւանդ կանանց և երեխաների ընդունելութիւնը ամեն օր, բացի կիրակի օրերից, 9½ մինչև 11 ժամ առաւօտեան, Բժշկապետ Անանով:

ՓՕԹԻ-ԹԻՖԼԻՍԵԱՆ ԵՐԿԱԹՈՒՂԻ

Թիֆլիսից մինչև Փօթի (ճանապարհորդների գնացքը) 9 ժամին 21 րօպէ առաւօտեան: Մինչև Միխայլօվօ (խառն գնացքը) երեկոյեան 5 ժամ. 18 րօպէ:

	առաւօտ.	երեկոյեան
Թիֆլիսից . .	9. 21	5. 18
Գօրի . . .	11. 58	9. 43
Միխայլօվօ.	1. 29	11. 57
Րիօն . . .	6. 47	
Փօթի . . .	9. 40	

	առաւօտ.	
Փօթիից . .	9. 13	
Րիօն . . .	12. 13	
Միխայլօվօ.	5. 39	1 37
Գօրի. . . .	7. 5	4 8
Թիֆլիս. . .	9. 31	7 56

Թիֆլիս գալիս է առաջին գնացքը երեկոյեան 9 ժ. 31 ր. երկրորդը՝ առաւօտեան 7 ժ. 56 ր.

Տեղերի գինը՝ Թիֆլիսից

	I կլաս.	II կլ.	III կլ.
Մցխէթ .	90	68	38
Գօրի. . ,	3. 20	2. 40	1. 33
Սուրամ.	5. 22	3. 92	2, 18
Րիօն. . .	9.	6. 75	3. 75
Փօթի . .	13. 1	9. 75	5. 42

ՓՕՍՏ

Ամեն տեսակ թէ նամակներ, թէ լրագիրներ և թէ ծանր փօստ ամեն տեղ ուղարկելու, ընդունվում են ամեն օր, առաւօտեան 8 ժամից մինչև 1 և կէսօրից յետոյ 3 ժամից մինչև 7: Իսկ կիրակի օրերը հասարակ նամակներ մինչև 10 ժամ առաւօտեան և 3—7 երեկոյեան:

Ռուսաստանից և Արտասահմանից փօստը ստացվում է Թիֆլիսում ամեն օր: Բագուի տրակտից՝ երեքշաբթի և շաբաթ օրերը: Երևանի տրակտից՝ երկուշաբթի, հինգշաբթի և շաբաթ: Փօթի-Թիֆլիսեան երկաթուղուց ամեն օր: Նուխու տրակտից՝ չորեքշաբթի և կիրակի: Բելիկլիւչի տրակտից՝ երեքշաբթի և շաբաթ:

ՆԱՄԱԿՆԵՐ	կօպ.
Բաց նամակը արժէ .	4
Ռուսաստան և Եւրոպայի բոլոր երկիրները նամակը արժէ	8
Ամերիկա	8
Պարսկաստան . . .	8
Հնդկաստան . . .	70
Եգիպտոս	27

ԲԺՇԿԱՆՈՑ

Հիւանդների ընդունելութիւնը 8-ից մինչև 10 ժամը յունիսի 1-ց մինչև սեպտեմբերի 1-ը:

Երկուշաբթի. Վէրմիշէվ և Գօրալեվիչ ներքին հիւանդութիւններ, Քուչաբեանց վիրաբուժական և կանանց հիւանդութիւններ 10-ից մինչև 11 ժամ:

Երեքշաբթի. Վէրմիշէվ ներքին հ. Բակստ վեներական և կաշու հ., Ա. Բախուտով կանանց, երեխաների հ. և մանկաբարձութեան. Պէտնով աչքի հ.:

Չորեքշաբթի. Վէրմիշէվ ներքին հ., Բակստ կրծքային և ջղային հ.:

Հինգշաբթի. Վէրմիշէվ ներքին հ. Բակստ կրծքային հ. Քուչարեանց սիֆիլիտական և միզային գործարանների 10—11 ժամ, Կ. Բախուտով կանանց և ջղային հ.:

Ուրբաթ. Վէրմիշէվ ներքին հ. Ա. Բախուտով կանանց և երեխաների հ. և մանկաբարձութեան:

Շաբաթ. Վէրմիշէվ ներքին հ. Բակստ կրծքային և ջղային հ. Պէտնով աչքի հիւանդութիւններ:

«ՄՇԱԿԻ» ՊԱՏԱՍԽԱՆՆԵՐ

—ԱԼԷՔՍԱՆԴՐԱՊՕԼ. Մ. Մի ճանապարհորդութիւն դէպի Անի արդէն տպեցինք, ձերը կրկնութիւն է նոյն բանի: Ինչի՞ չէք զբաղվում օրական հարցերով:

—ԱՍՏՐԱԽԱՆ. Մ. Նամակը կը տպենք հետևեալ համարում:

—ԹԻՖԼԻՍ. Ս. Ձեր տուած խորհուրդը վատ չէ, կը մտածենք նրա մասին:

—ԹԻՖԼԻՍ. Կ. Դ. Այն ինչ որ ձեզ վրդովում է շատ չնչին բան է: Չէք մեղադրում այն մարդուն, որ անկարգութիւններ է անում, յարձակվում է նրանց վրա, որոնք ցոյց են տալիս հասարակութեանը գործած անճշդութիւնները:

—ԵՐԵՒԱՆ. Ք. Վիպասանութիւնը յարմար չէ տպագրութեան համար:

—ԽԱՐԿՕՎ. Խ. Տ. Թ. Ձեր ազգանունն էլ ով է վերջանում. այդ էր պակաս:

Дозволено Цензурою 28 Сентября 1878 г. Тифлисъ

Типографія Мартиросіанца

Խմբագիր—Հրատարակող ԳՐԻԳՈՐ ԱՐԾՐՈՒՆԻ